

ՀՈՎՈՒՄԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍԱՆ ԼՈՒԻՍ, ՕՊԻՍՓՕ, ԳԱԼԻՖՈՐՆԻԱ

Ուրբաթ, Հոկտեմբերի 24-ին, երեկոյան ժամը 6-ին, Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրպէրեան հովուական իր երկրորդ այցելութիւնը փութաւ Սան Լուիս Օպիսպոյի հայ համայնքին՝ անդրանիկ Ս. Պապարագը մատոյց եւ յատուր պապաշահի քարոզեց: Սուրբ Խորանին կը սպասարկէին Լոս Անճելըսէն Սրբազան Հօր ընկերակցող Բարեշնորհ Մայիս սրկ. Շահպազեան, դպիր Կարէն Վարդանեան եւ Բարեշնորհ Սթիվըն սրկ. Արամգ՝ Ֆրէզնոյէն:

Ս. Պապարագէն երբ սուրճի հիւրասիրութեամբ մտերմիկ հանդիպման ընթացքին, Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Տիկին Մարկօ Վարդանեան ողջունեց Սրբազան Հայրը եւ ներկաները: Առաջնորդ Սրբազան Հայրը գնահատեց համայնքի համեստ ծառայողներուն նուիրումը, յորդորեց զանոնք յաճախակի նման հանդիպումներ կազմակերպել, շարքցնել հաւաքացեալներու թիւը եւ հասնիլ շրջանի հայութեան եւ յարկապէս երիտասարդութեան հոգեւոր կարիքներուն:

ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻՒ ՀԵՂԻՆԱԿ ՓԻԹԸՐ ՊԱԼԱՔԵԱՆԻ

Նոյեմբերի 5-ին Արեւմտեան թեմի Առաջնորդարանը, հովանաւորութեամբ եւ նախագահութեամբ բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրպէրեանի, գրական երեկոյթով մը պատուեց «*Ճակարագրի Սև Շունը*» գրքի հեղինակ Փիթըր Պալաքեանը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ողջունեց ներկաները եւ պատուոյ հիւրը, գնահատութեան իր ջերմ զգացումները արտայայտեց Պրն Պալաքեանին, իր կարարած ազգօգուտ եւ շնորհակալ աշխատանքին համար: Տիկին Սինթի Նորեան հակիրճ կենսագրական գծերով անկի քան 300 ներկաներուն ծանօթացուց անգլիագիր հայ գրող Պալաքեանը: Ձեռնարկին ներկայ էին նաեւ Գերշ. Տ. Վաչէ արքեպս. Յովսէփեան, Առաջնորդարանէն ներս ծառայող հոգեւորականները եւ երիտասարդներու պապկառելի թիւ մը:

Պրն Պալաքեան ներկայացուց գրական իր նոր աշխատանքը՝ «*Հատուող Տիգրիսը*» («*The Burning of Tigris*»)՝ հապտածներ ընթերցելով անկէ: Անդրադարձաւ պատմութիւն գրելու իր հակումներուն, որ փարիներու փրկաշան պրպտումներու եւ ուսումնասիրութիւններու արգասիքն է այս գիրքը, որ կը պարունակէ նաեւ ջարդին նկարահանուած իսկական պատկերներու պատճէնը՝ կոտորածի գոհերուն եւ ջարդարարներուն: Հեղինակը նկարագրեց նաեւ թուրք կառավարութեան, Համաշխարհային Առաջին պատերազմի առիթի օգտագործմամբ, հայը բնաջնջելու իր անմարդկային ծրագրին, Ամերիկայի եւ ընդհանրապէս աշխարհի անարարքեր կեցուածքը հանդէպ 1915-ի մեծ կոտորածին: Ձեռնարկն աւարտեցաւ գիշերուան 9.15-ին, որմէ ետք Պրն Պալաքեան մինչեւ ժամը 10.45 մակագրեց մօտ 200-ի հասնող հերթի կանգնած անհայրներուն գրքերը, որոնց մէջ վառ էր Հայոյ Ոգին: